



N 21-06  
17.02.2021

ՀՀ արդարադատության նախարար՝  
պարոն Ռուստամ Բադալյանին՝

Հարգելի պարոն Բադալյան,

ՀՀ արդարադատության նախարարի 04.06.2019թ. թիվ 198 հրամանով և 12.07.2018թ. թիվ 336-Լ հրամանի հավելված N 3-ով սահմանվում են ազատազրկված անձի պատիժը կրելուց վաղաժամկետ ազատվելու, կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու համար անհրաժեշտ և ՀՀ ԱՆ քրեակատարողական և պրոբացիայի ծառայությունների կողմից գեկույցի կազմման համար դատապարտյալի անձնական գործի և վարքագծի փաստական նկարագրի վերաբերյալ ներկայացված տեղեկանքում ներառված տեղեկատվության գնահատման հիմքում ընկած վավերապայմանները և չափորոշիչները:

Սույն չափորոշիչների «գնահատման վավերապայմանները» վերտառությամբ աղյուսակի 5-րդ և 6-րդ կետերում համապատասխանաբար սահմանվում են հանցագործության կատարման պահին և գնահատման ներկա պահին դատապարտյալի ունեցած **տարիքի** հիմքով տրվելիք միավորները: Մասնավորապես, 5-րդ կետով սահմանված «տարիքը հանցագործություն կատարելու պահին» չափորոշիչով մինչև 28 տարեկան հասակում հանցագործություն կատարած լինելու դեպքում պատիժը կրելուց վաղաժամկետ ազատվելու, կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու համար նախատեսվում է 0 միավոր, 28-ից մինչև 55 տարեկանի դեպքում 1 միավոր, իսկ 55-ից բարձրի դեպքում՝ 2 միավոր:

Գնահատման նույնատիպ մոտեցում ցուցաբերվում է նաև 6-րդ՝ «դատապարտյալի տարիքը ներկա պահին» կետով, որի շրջանակներում նույնպես սահմանվում է, որ եթե պատիժը կրելուց վաղաժամկետ ազատվելու, կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու համար դիմած դատապարտյալը դիմելու պահին մինչև 28 տարեկան է, ապա նրան տրվում է 0 միավոր, 28-ից մինչև 55 տարեկանի դեպքում 1 միավոր, իսկ 55-ից բարձրի դեպքում՝ 2 միավոր:

Նշված տարբերակված մոտեցումը չունի օբյեկտիվ հիմնավորում և գտնում էմ, որ վերոնշյալ չափորոշիչների մեջ 5-րդ և 6-րդ կետերը, որոնք սահմանում են տարիքային հիմքով և անորոշ իրավական տրամաբանությամբ ընտրված տրամադրվելիք միավորներ, ակնհայտորեն չեն բխում խտրականության արգելքի, իրավական որոշակիության և համաչափության սկզբունքների կիրառման հրամայականից:

ՀՀ Սահմանադրության 29-րդ հոդվածի համաձայն՝ խտրականությունը, կախված սեռից, ռասայից, մաշկի գույնից (...), **տարիքից** կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից, արգելվում է: 78-րդ հոդվածի համաձայն՝ հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է պիտանի և անհրաժեշտ լինեն Սահմանադրությամբ սահմանված նպատակին հասնելու համար: 79-րդ հոդվածի համաձայն՝ հիմնական իրավունքները և ազատությունները սահմանափակելիս օրենքները պետք է սահմանեն



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ  
ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐՈՒՄ ԵՎ ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒՄ  
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՎԵՐԱՀՄԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ  
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴԻՏՈՐԴՆԵՐԻ ԽՈՒՄԲ**

այդ սահմանափակումների հիմքերը և ծավալը, լինեն բավարար չափով որոշակի, որպեսզի այդ իրավունքների և ազատությունների կրողները և հասցեատերերն ի վիճակի լինեն դրսևորելու համապատասխան վարքագիծ:

Թիվ 336-Լ հրամանի և դրան կից հավելվածների գործնական կիրառության արդյունքում, ներքոգրյալ մոտեցման հիմքում ընկած տրամաբանությունը չգտնելուն զուգահեռ, արձանագրում ենք, որ երբ օրենսդիրը մինչև 28 տարեկան հասակում հանցագործություն կատարած լինելու դեպքում անձին պայմանական վաղաժամկետի կամ պատժի փոխարինման համար տրամադրում է 0 միավոր, իսկ 28-55 տարեկանում հանցագործություն կատարած լինելու դեպքում՝ 1 միավոր, ակնհայտորեն խախտվում է տարիքային հիմքով խտրականության սահմանադրական արգելքը: Բնականաբար, ինչպես յուրաքանչյուր իրավակարգավորման մեջ, այստեղ նույնպես *թույլատրելի և իրավական մտածողությանը համապատասխանելի են սահմանափակումները կամ որոշակի խմբերի անձանց տրվող արտոնությունները, սակայն այդ ամենը պետք է տեղավորվի օրենքով սահմանված սկզբունքների շրջանակներում, չդառնա տարակարծությունների և անձի իրավունքների խախտման հիմք:*

Մասնավորապես գտնում եմ, որ սույն հավելվածի մեջ *տարիքային հիմքով տրամադրվող միավորների հատվածը պետք է ամբողջովին հանվի՝* տարիքով պայմանավորված խտրականությունների կիրառման, անհասկանալի իրավական մեկնաբանությունների տեղիք չտալու և բոլորի համար հավասար պայմանների առկայությունն ապահովելու համար:

Ուստի, ելնելով վերոգրյալից, խնդրում եմ վերանայել 12.07.2018թ. թիվ 336-Լ հրամանի N 3 հավելվածը, մասնավորապես, *ամբողջովին հանել* պատիժը կրելուց վաղաժամկետ ազատվելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու համար *տարիքային հիմքով պայմանավորված միավորների տրամադրման 5-րդ և 6-րդ կետերը:*

Հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ միավորներ ձեռք բերելու համար նախատեսված այս կետերը հանելուց հետո կառաջանա խնդիր՝ սահմանված նվազագույն 28 միավորը հավաքելու հարցում, միաժամանակ առաջարկում եմ *վերանայել և համամասնորեն նվազեցնել ՀՀ արդարադատության նախարարի N 198-Լ հավելվածում սահմանված 28 միավորի շեմը*, դրանով ապահովելով վկայակոչված հավելվածների՝ ՀՀ օրենսդրությանը համապատասխանելու, վերջինիս սկզբունքներից բխելու, որևէ խտրականության տեղիք չտալու և բոլորի համար հավասար ու արդարացի պայմաններ ստեղծելու հանգամանքը:

**Հարգանքով՝**

**Խմբի նախագահ** 

**Արայիկ Զայան**